

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ղազախստանի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

միգրացիայի ոլորտում համագործակցությունը դիտարկելով որպես Կողմ
պետությունների տարածքներում միգրացիոն գործընթացների կարգավորման
կարևորագույն ուղղություններից մեկը,

ծգտելով ստեղծել իրավական հիմք միգրացիայի ոլորտում՝ Կողմերի
երկկողմ համագործակցության համար,

ցանկանալով միգրացիայի ոլորտում գործընկերային
համագործակցության ճանապարհով ամրապնդել հարաբերությունները՝ երկու
պետությունների համագործակցության հետագա զարգացման նպատակով,

հիմնվելով միջազգային իրավունքի սկզբունքների, նորմերի և Կողմ
պետությունների օրենսդրության վրա,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը իրականացնում են
համագործակցություն միգրացիայի և մի Կողմ պետության տարածքում գտնվող՝
մյուս Կողմ պետության քաղաքացիների իրավունքների պաշտպանության
ոլորտում, այդ թվում՝ նաև տեղեկատվական համագործակցություն, համաձայն
իրենց պետությունների օրենսդրությունների և միջազգային
պարտավորությունների:

Կողմերն իրենց ազգային օրենսդրությունների և միջազգային
պայմանագրերի շրջանակներում աջակցում են Կողմ պետությունների
տարածքում պետական մարմինների և տնտեսական սուբյեկտների միջև
համագործակցությանը աշխատանքային ռեսուրսների ներգրավման ոլորտում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի իրագործման համար պատասխանատու՝ Կողմ
պետությունների իրավասու մարմիններ են (այսուհետ՝ իրավասու մարմիններ)՝

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունը և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը,

Ղազախստանի Հանրապետության կողմից՝ Ղազախստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Ղազախստանի Հանրապետության բնակչության սոցիալական պաշտպանության և աշխատանքի նախարարությունը:

Իրավասու մարմինների կամ դրանց անվանումների փոփոխության դեպքում համապատասխան Կողմը մյուս Կողմին այդ մասին հայտնում է դիվանագիտական ուղիներով հնարավոր սեղմ ժամկետներում:

Հոդված 3

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը համագործակցություն են իրականացնում հետևյալ հիմնական ուղղություններով.

1) վիճակագրական, իրավական և գիտամեթոդական տեղեկատվության փոխանակում,

2) Կողմ պետությունների տարածքում գտնվող Կողմ պետությունների քաղաքացիների մասին տեղեկությունների փոխանակում,

3) փորձի փոխանակում և գործնական օգնության ցուցաբերում համագործակցության գործընթացում ի հայտ եկող հարցերում,

4) Կողմ պետությունների քաղաքացիների իրավունքների, այդ թվում՝ իրենց ընտանիքների անդամների բնակության իրավունքի պաշտպանություն՝ բնակության համար տրված թույլտվության ժամկետների ընթացքում,

5) Կողմ պետությունների տարածքում գտնվելու (կացության) հիմքեր ունեցող անձանց իրավական կարգավիճակի հարցերի քննարկում:

2. Սույն Համաձայնագիրը խոչընդոտ չի հանդիսանում Կողմերի համար երկուստեք հետաքրքրություն ունեցող համագործակցության այլ ուղիների մշակման և զարգացման գործում:

Հոդված 4

Անհրաժեշտության և փոխադարձ պայմանավորվածության դեպքում Կողմերն իրականացնում են տեղեկատվության և տեղեկությունների փոխանակում՝

միգրացիոն օրենսդրության խախտումների և հայտնաբերված անօրինական միգրացիայի ուղիների մասին,

Կողմ պետությունների տարածքներում գործող անօրինական միգրացիայի կազմակերպմանը և իրականացմանը մասնակից իրավաբանական, ինչպես նաև ֆիզիկական անձանց մասին,

անօրինական միգրացիայի նպատակով մուտքի արտոնագրերի և այլ փաստաթղթերի ստացման և դրանց օգտագործման միջոցների մասին,

Կողմ պետությունների միգրացիոն օրենսդրության, այդ թվում՝ միգրացիոն գործընթացների կարգավորման, ապաստանի և քաղաքացիության տրամադրման կարգի, անօրինական միգրացիայի դեմ պայքարի կազմակերպման, ինչպես նաև նշված օրենսդրության ոլորտներում փոփոխությունների մասին,

անօրինական միգրացիայի կանխարգելմանն ուղղված պրակտիկայի և միջոցների մասին,

արտաքին միգրացիայի կարգավորման մեթոդների մասին:

Հոդված 5

1. Կողմերը անօրինական միգրացիային հակազդման և իրենց քաղաքացիների իրավունքների պաշտպանության նպատակով փոխանակում են Կողմ պետությունների քաղաքացիների մասին հետևյալ կատեգորիաների տեղեկություններ.

1) Կողմ պետությունների քաղաքացիների հաշվառման (գրանցման) գտնվելու (կացության) վայրի մասին,

2) հատուկ, մշտական և ժամանակավոր կացության կարգավիճակ, ինչպես նաև Կողմ պետությունների տարածքում աշխատանքի իրավունք ունեցող՝ Կողմ պետությունների քաղաքացիների մասին տեղեկություններ,

3) մի Կողմ պետության քաղաքացիների՝ մյուս Կողմ պետության քաղաքացիության ստացման կամ վերականգնման, ինչպես նաև Կողմերից մեկի քաղաքացիության պատկանելության մասին տեղեկություններ,

4) Կողմ պետությունների քաղաքացիների ստացած՝ անձը հաստատող փաստաթղթերի մասին:

2. Կողմերը փոխանակում են Կողմ պետությունների տարածք մուտք գործելու (կամ իրենց տարածքից դուրս գալու) սահմանափակման առկայության և հիմքերի, ինչպես նաև Կողմ պետությունների տարածքներից վտարված անձանց մասին տեղեկություններ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված՝ անձանց հայտնաբերման, անձի հաստատման և իրավական կարգավիճակի որոշման նպատակով Կողմերը կարող են փոխանակել հետևյալ անձնական տվյալները.

ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն և լատիներեն),

սեռ,

ծննդյան ամսաթիվ,

ծննդյան վայր,

քաղաքացիություն,

սահմանը հատելու համար փաստաթուղթ տված մարմին, փաստաթղթի սերիա, համար, տալու ամսաթիվ կամ Կողմ պետությունների տարածքներում կացության համար անձը հաստատող փաստաթուղթ,

վարչական պատասխանատվության ենթարկելու մասին,

քրեական պատասխանատվության ենթարկելու մասին,

Կողմ պետությունների տարածքներում հաշվառման (գրանցման) և գտնվելու (կացության) վայրի մասին,

Կողմ պետությունների՝ ժամանակավոր, մշտական կարգավիճակի, ինչպես նաև աշխատանքի իրավունքի առկայության մասին,

Կողմ պետությունների տարածքներ մուտք գործելու կամ Կողմ պետությունների տարածքներից դուրս գալու սահմանափակման փաստի մասին՝ նշելով դրանց ժամկետները,

լուսանկարչական պատկերներ,

մատնադրոշմային քարտ (առկայության դեպքում):

Հոդված 7

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը համագործակցություն են իրականացնում հետևյալ ձևերով.

1) Կողմ պետությունների՝ միգրացիոն հարցերով զբաղվող իրավասու մարմինների աշխատակիցների պատրաստում և որակավորման բարձրացում, ներառյալ տվյալ ոլորտում սեմինարների և որակավորման կազմակերպում,

2) համագործակցության ընթացքում ծագող հարցերով աշխատանքային խմբերի ստեղծում և փորձագետների փոխանակում,

3) գիտագործնական կոնֆերանսների, սեմինարների անցկացում և միասնական գործողություններ պահանջող համագործակցության այլ ձևերի կիրառում,

4) Կողմ պետությունների տարածքային մարմինների, ենթագերատեսչական կազմակերպությունների և իրավասու հիմնարկների աշխատանքներին ծանոթացում,

5) միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ միասնական ծրագրերի իրականացում:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է շահագրգիռ Կողմի՝ աջակցություն ցուցաբերելու մասին հարցումների հիման վրա (այսուհետ՝ հարցում):

Կողմերից յուրաքանչյուրը կարող է նաև մյուս Կողմին առանց հարցման ուղարկել միգրացիայի հարցերով իր մոտ առկա տեղեկատվությունը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ այդպիսի տեղեկատվությունը մյուս Կողմի համար հետաքրքրություն է ներկայացնում:

Հոդված 9

1. Հարցումը և հարցման պատասխանն ուղարկվում են գրավոր, այդ թվում՝ տեքստի փոխանցման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը համագործակցությունը կարող են կազմակերպել կապի պաշտպանված էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ:

2. Հարցումը պետք է պարունակի՝

հարցում կատարող և հարցվող մարմինների անվանումները,

հարցման էության կարճ շարադրումը, դրա նպատակը և հիմնավորումը,

ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է օգտագործվել հարցումը պատշաճ կատարելու համար:

3. Հարցումը ստորագրվում է Կողմ պետության իրավասու մարմնի ղեկավարի (նրա տեղակալի) կամ նրա լիազորած անձի կողմից, ովքեր հարցումների կատարման համակարգողներ են: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում, Կողմերը փոխանակում են հարցումների ստորագրման իրավասություն ունեցող անձանց ցուցակներ, ինչպես նաև ձևաթղթերի նմուշներ:

4. Սույն հոդվածի 3-րդ կետում նշված հարցումների ստորագրման իրավասություն ունեցող անձանց ցուցակների կամ ձևաթղթերի փոփոխության դեպքում Կողմերն այդ մասին անհապաղ տեղեկացնում են միմյանց:

5. Հարցման իսկության և բովանդակության վերաբերյալ կասկածի դեպքում կարող է հայցվել լրացուցիչ հաստատում:

Հոդված 10

1. Հարցվող Կողմը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման արագ և լիարժեք իրականացումն ապահովելու համար:

Հարցվող Կողմն իրավունք ունի հայցելու լրացուցիչ տեղեկություններ, որոնք, իր կարծիքով, անհրաժեշտ են հարցման պատշաճ կատարման համար:

Հարցվող Կողմն անհապաղ ծանուցում է հարցում կատարող Կողմին հարցման կատարմանը խոչընդոտող կամ դրա կատարումն էապես հետաձգող պայմանների մասին:

2. Եթե հարցվող Կողմը ենթադրում է, որ հարցման կատարումը կարող է խանգարել իր պետության տարածքում իրականացվող քրեական հետապնդմանը կամ այլ վարույթի, նա իրավունք ունի հետաձգելու հարցման կատարումը կամ դրա կատարումը կապել իր կողմից սահմանված որոշակի պայմանների պահպանման հետ:

3. Հարցվող Կողմը հնարավոր սեղմ ժամկետներում հարցում կատարող Կողմին տեղեկացնում է հարցման կատարման արդյունքների մասին: Հարցման կատարման ժամկետը չպետք է գերազանցի 30 (երեսուն) օրացուցային օրը՝ դրա ստացման ամսաթվից սկսած:

4. Հարցման կատարումը ամբողջովին կամ մասնակի մերժվում է, եթե հարցվող կողմը ենթադրում է, որ հարցման կատարումը կարող է վնաս հասցնել իր պետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ հակասում է օրենսդրությանը, միջազգային

պարտավորություններին և չի համապատասխանում սույն Համաձայնագրի նպատակներին:

Հարցում կատարող Կողմը գրավոր ծանուցվում է հարցման կատարման ամբողջական կամ մասնակի մերժման մասին՝ մերժման պատճառների նշումով:

Հոդված 11

1. Հարցվող Կողմը ձեռնարկում է հարցման, դրա բովանդակության և կից փաստաթղթերի ստացման, ինչպես նաև օգնություն ցուցաբերելու փաստի գաղտնիության ապահովման համար անհրաժեշտ միջոցներ:

Հարցման կատարման գաղտնիությունը պահպանելու անհնարինության դեպքում հարցվող Կողմը այդ մասին տեղեկացնում է հարցում կատարող Կողմին, որն էլ որոշում է, արդյոք անհրաժեշտ է կատարել հարցումը նման պայմաններով:

2. Սույն Համաձայնագրի հիման վրա ստացված հարցման իրականացման արդյունքներն առանց դրանք տրամադրած Կողմի համաձայնության չեն կարող կիրառվել այլ նպատակներով, քան այն նպատակներն են, որոնց համար դրանք հարցվել և տրամադրվել են:

3. Սույն Համաձայնագրի հիման վրա մի Կողմից ստացված տեղեկությունը երրորդ Կողմին փոխանցելու համար անհրաժեշտ է տեղեկությունը տրամադրած Կողմի լրացուցիչ գրավոր համաձայնությունը:

4. Կողմերը, առաջնորդվելով յուրաքանչյուր Կողմ պետության օրենսդրությամբ և միջազգային պարտավորություններով, իրականացնում են անհրաժեշտ կազմակերպչական-տեխնիկական միջոցներ՝ ուղղված սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության պաշտպանությանը՝ անսպասելի կամ անօրինական ոչնչացումից, փոփոխությունից կամ տարածումից, ինչպես նաև ցանկացած այլ չարտոնված մուտքից կամ կիրառումից:

5. Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը պահպանվում է ոչ ավել, քան դա պահանջում են այն նպատակները, որոնց համար փոխանցվել է: Տեղեկատվությունը ենթակա է ոչնչացման՝ յուրաքանչյուր Կողմ պետության օրենսդրության համապատասխան:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման ընթացքում Կողմերի միջև ծագող բոլոր վիճելի հարցերը կարգավորվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 13

Կողմերը, սույն Համաձայնագրի կիրարկման ընթացքում առաջացող ծախսերը կրում են ինքնուրույն՝ իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան, եթե ամեն կոնկրետ դեպքում այլ կարգ չի սահմանվում:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունները, որոնց մասնակիցներ են իրենց պետությունները:

Հոդված 15

Կողմերը Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության իրականացման համար օգտագործում են ռուսերենը:

Հոդված 16

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կազմում են դրա անբաժանելի մասը և ձևակերպվում են առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով:


Հոդված 17

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դադարեցման մասին ծանուցումը դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին ուղարկելով: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է այդ մասին մի Կողմի ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից 6 (վեց) ամիսը լրանալուց հետո:

Կատարված է Երևան քաղաքում 2024 թվականի ապրիլի «15»-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Տեքստերի միջև տարաձայնությունների դեպքում Կողմերը հղում կկատարեն ռուսերեն տեքստին:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**



**Ղազախստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**



СОГЛАШЕНИЕ

между Правительством Республики Армения и Правительством Республики Казахстан о сотрудничестве в области миграции

Правительство Республики Армения и Правительство Республики Казахстан, в дальнейшем именуемые Сторонами,

рассматривая сотрудничество в области миграции как одно из важнейших направлений регулирования миграционных процессов на территориях государств Сторон,

стремясь создать правовую основу для двустороннего сотрудничества Сторон в области миграции,

желая углубить отношения путем партнерского сотрудничества в области миграции в целях дальнейшего развития сотрудничества обоих государств,

основываясь на принципах и нормах международного права, законодательстве государств Сторон,

согласились о нижеследующем:

Статья 1

В рамках настоящего Соглашения Стороны осуществляют сотрудничество в области миграции, защиты прав граждан государства одной Стороны, находящихся на территории государства другой Стороны, в том числе информационное взаимодействие, в соответствии с законодательствами и международными обязательствами своих государств.

Стороны в рамках своих национальных законодательств и международных договоров содействуют сотрудничеству между государственными органами и хозяйственными субъектами в области привлечения трудовых ресурсов на территории государств Сторон.

Статья 2

Компетентными органами государств Сторон, ответственными за реализацию настоящего Соглашения (далее именуемые – Компетентные органы), являются:

от Республики Армения – Полиция Министерства внутренних дел Республики Армения и Служба миграции и гражданства Министерства внутренних дел Республики Армения;

от Республики Казахстан - Министерство внутренних дел Республики Казахстан и Министерство труда и социальной защиты населения Республики Казахстан.

В случаях изменения названий компетентных органов, замены одних государственных органов другими, соответствующая Сторона сообщает другой Стороне об этом по дипломатическим каналам в возможно короткие сроки.

Статья 3

1. Стороны осуществляют сотрудничество в рамках настоящего Соглашения по следующим основным направлениям:

1) обмен статистической, правовой и научно-методической информацией;

2) обмен сведениями о гражданах государств Сторон, находящихся на территориях государств Сторон;

3) обмен опытом и оказание практической помощи по вопросам, возникающим в процессе сотрудничества;

4) защита прав граждан государств Сторон, в том числе прав проживания членов их семей, в течение срока выданных им разрешений на проживание;

5) рассмотрение вопросов правового статуса лиц, имеющих основания для пребывания (проживания) на территориях государств Сторон.

2. Настоящее Соглашение не препятствует Сторонам в разработке и развитии иных взаимоприемлемых направлений сотрудничества.

Статья 4

1. В случае необходимости и по взаимной договоренности Стороны осуществляют обмен информацией и сведениями:

о выявленных нарушениях миграционного законодательства и каналах незаконной миграции;

о действующих на территориях государств Сторон юридических лицах, а также физических лицах, причастных к организации и осуществлению незаконной миграции;

о способах получения въездных виз, иных документов и их использования в целях незаконной миграции;

о миграционном законодательстве государств Сторон, в том числе урегулировании миграционных процессов, порядке предоставления убежища и гражданства, организации борьбы с незаконной миграцией, а также изменениях в указанных областях законодательства;

о практике и мерах, направленных на предупреждение незаконной миграции;

о методах регулирования внешней миграции.

Статья 5

1. В целях противодействия незаконной миграции и обеспечения прав граждан своих государств, Стороны обмениваются информацией о гражданах государств Сторон по следующим категориям:

1) сведения об учете (регистрации) по месту пребывания (жительства) граждан государств Сторон;

2) сведения о гражданах государств Сторон, имеющих специальный, временный и постоянный статусы проживания, а также право на работу на территории государств Сторон;

3) сведения о гражданах государства одной Стороны, принятых или восстановленных в гражданстве государства другой Стороны, а также принадлежности к гражданству одной из Сторон;

4) сведения о документах, удостоверяющих личность, полученных гражданами государств Сторон.

2. Стороны обмениваются сведениями о наличии и основаниях ограничений на въезд на территорию государств Сторон (либо выезд с их территории), а также о лицах, выдворяемых с территории государств Сторон.

Статья 6

В целях выявления, установления личности и определения правового статуса лиц, указанных в статье 5 настоящего Соглашения, Стороны могут обмениваться следующими персональными данными:

фамилия, имя, отчество (в русском и латинском написании);

пол;

дата рождения;

место рождения;

гражданство;
серия, номер, дата выдачи, орган, выдавший документ для выезда за границу или документ, удостоверяющий личность, для проживания на территории государств Сторон;
о привлечении к административной ответственности;
о привлечении к уголовной ответственности;
об учете (регистрации) по месту пребывания (жительства) на территории государств Сторон;
о наличии разрешения на временное и постоянное проживание, а также права на работу на территории государств Сторон;
о факте неразрешения въезда на территории государств Сторон либо ограничении на выезд с территории государств Сторон с указанием их сроков;
фотографические изображения;
дактилоскопическая карта (при наличии).

Статья 7

Стороны осуществляют сотрудничество в рамках настоящего Соглашения в следующих формах:

- 1) подготовка и повышение квалификации сотрудников компетентных органов государств Сторон, занимающихся вопросами миграции, включая организацию семинаров и стажировок в данной области;
- 2) создание рабочих групп и обмен экспертами по вопросам, возникающим в процессе сотрудничества;
- 3) проведение научно-практических конференций, семинаров и использование других форм сотрудничества, которые требуют совместных действий;
- 4) ознакомление с работой территориальных органов, подведомственных организаций и компетентных учреждений государств Сторон;
- 5) осуществление совместных проектов с участием международных организаций.

Статья 8

Сотрудничество в рамках настоящего Соглашения осуществляется на основании запросов заинтересованной Стороны об оказании содействия (далее - запрос).

Каждая из Сторон также может направлять другой Стороне имеющуюся у нее информацию по вопросам миграции без запроса, если есть основания полагать, что такая информация представляет интерес для другой Стороны.

Статья 9

1. Запрос и ответ на запрос направляются в письменной форме, в том числе с использованием технических средств передачи текста.

В целях реализации настоящего Соглашения Стороны могут организовать взаимодействие с использованием защищенных электронных средств связи.

2. Запрос должен содержать:
наименование запрашивающего и запрашиваемого органа;
краткое изложение существа запроса, его цель и обоснование;
любую другую информацию, которая может быть использована для надлежащего исполнения запроса.

3. Запрос подписывается руководителем (его заместителем) компетентного органа государства Стороны или уполномоченным им лицом, которые являются координаторами по исполнению запросов. Стороны обмениваются перечнями лиц, уполномоченных на подписание запросов, а также образцами бланков в течение 45 (сорок пять) дней после вступления в силу настоящего Соглашения.

4. В случае изменения указанных в пункте 3 настоящей статьи перечней лиц, уполномоченных на подписание запросов, либо бланков, Стороны незамедлительно уведомляют друг друга об этом.

5. При возникновении сомнения в подлинности или содержании запроса может быть запрошено дополнительное подтверждение.

Статья 10

1. Запрашиваемая Сторона принимает все необходимые меры для обеспечения быстрого и полного исполнения запроса.

Запрашиваемая Сторона вправе запросить дополнительные сведения, необходимые, по ее мнению, для надлежащего исполнения запроса.

Запрашиваемая Сторона незамедлительно уведомляет запрашивающую Сторону об обстоятельствах, препятствующих

исполнению запроса или существенно задерживающих его исполнение.

2. Если запрашиваемая Сторона полагает, что исполнение запроса сможет помешать уголовному преследованию или иному производству, осуществляемому на территории ее государства, она вправе отложить исполнение запроса или связать его исполнение с соблюдением определенных ею условий.

3. Запрашиваемая Сторона в возможно короткие сроки информирует запрашивающую Сторону о результатах исполнения запроса. Срок исполнения запроса не должен превышать 30 (тридцать) календарных дней с даты его поступления.

4. В исполнении запроса отказывается полностью или частично, если запрашиваемая Сторона полагает, что выполнение запроса может нанести ущерб суверенитету, безопасности, общественному порядку либо противоречит законодательству или международным обязательствам ее государства и не соответствует целям настоящего Соглашения.

Запрашивающая Сторона письменно уведомляется о полном или частичном отказе в исполнении запроса с указанием причин отказа.

Статья 11

1. Запрашиваемая Сторона принимает необходимые меры для обеспечения конфиденциальности фактов поступления запроса, его содержания и сопровождающих его документов, а также оказания содействия.

В случае невозможности исполнения запроса без сохранения конфиденциальности, запрашиваемая Сторона информирует об этом запрашивающую Сторону, которая решает, следует ли исполнять запрос на таких условиях.

2. Результаты исполнения запроса, полученные на основании настоящего Соглашения, без согласия предоставившей их Стороны, не могут быть использованы в иных целях, чем те, в которых они запрашивались и были представлены.

3. Для передачи третьей стороне сведений, полученных одной Стороной на основании настоящего Соглашения, требуется предварительное письменное согласие Стороны, представившей сведения.

4. Стороны, руководствуясь законодательством и международными обязательствами каждого из государств Сторон, осуществляют необходимые организационно-технические меры, направленные на защиту информации, полученной в рамках настоящего

Соглашения, от случайного или незаконного уничтожения, изменения или распространения, а также любого иного несанкционированного доступа или использования.

5. Информация, полученная в рамках настоящего Соглашения, хранится не дольше, чем этого требуют цели, для которых она была передана. Информация подлежит уничтожению в соответствии с законодательством каждого из государств Сторон.

Статья 12

Все спорные вопросы между Сторонами, связанные с выполнением или толкованием настоящего Соглашения, решаются путем консультаций и переговоров между ними.

Статья 13

Стороны самостоятельно несут расходы, которые возникают в ходе реализации настоящего Соглашения, в соответствии с национальными законодательствами Сторон, если в каждом конкретном случае не будет согласован иной порядок.

Статья 14

Положения настоящего Соглашения не затрагивают обязательств Сторон, вытекающих из других международных договоров, участниками которых являются их государства.

Статья 15

Стороны при осуществлении сотрудничества в рамках настоящего Соглашения пользуются русским языком.

Статья 16

По взаимному согласию Сторон, в настоящее Соглашение могут вноситься изменения и дополнения, которые являются его неотъемлемой частью, оформляются отдельными протоколами и вступают в силу в порядке, предусмотренном статьей 17 настоящего Соглашения.

Статья 17

Настоящее Соглашение вступает в силу с даты получения последнего письменного уведомления по дипломатическим каналам о выполнении Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.

Каждая из Сторон может прекратить действие настоящего Соглашения, направив по дипломатическим каналам письменное уведомление другой Стороне о своем намерении прекратить его действие. В таком случае действие настоящего Соглашения прекращается по истечении 6 (шести) месяцев с даты получения одной Стороной такого уведомления от другой Стороны.

Совершено в городе Ереване «15» апреля 2024 года в двух экземплярах на армянском, казахском и русском языках, причем все тексты имеют одинаковую силу. В случае расхождения между текстами, Стороны обращаются к тексту на русском языке.

За Правительство
Республики Армения

За Правительство
Республики Казахстан

